214. Ի՞նչ միավորով է չափվում նյութի խտությունը միավորների ՄՀ-ում:

1) 1 մ ^{2}:
2) 1 կգ/մ ^{3}:
3) 1 մ ^{3}/կգ:
4) 1 կգ/մ ^{2}:

215. Նշված նյութերից որի՞ խտությունն է ավելի մեծ:

1) Ջուր:
2) Կերոսին:
3) Փայտ:
4) Երկաթ:

216. Նկարում պատկերված մարմինը չափագլանի մեջ ընկղմելիս ջուրն ab մակարդակից բարձրացավ մինչև a'b' մակարդակը: Որքա՞ն է մարմնի ծավալը: Չափագլանի սանդղակի թվերն արտահայտված են սմ^3 միավորով:



1) 81 սմ^3:
2) 4,5 սմ^3:
3) 3,4 սմ^3:
4) 2,8 սմ^3:

217. Միևնույն նյութից պատրաստված երկու համասեռ խորանարդների կողերը միմյանցից տարբերվում են երկու անգամ: Ինչպիսի՞ն է այդ խորանարդների զանգվածների հարաբերակցությունը:

1) Հավասար են:
2) Տարբերվում են 2 անգամ:
3) Տարբերվում են 4 անգամ:
4) Տարբերվում են 8 անգամ:

218. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Ուժը մարմնի արագության փոփոխության պատճառն է:
2) Ուժը մարմնի դեֆորմացիայի պատճառն է:
3) Ուժը վեկտորական մեծություն է:
4) Ուժի ազդեցությամբ մարմնի արագության մոդուլը միշտ աճում է:

219. Ո՞րն է նախադասության *սխալ* շարունակությունը:
Ուժը կարելի է որոշել՝ չափելով…

1) նրա ազդեցությամբ հայտնի զանգվածով մարմնի ձեռք բերած արագացումը:
2) նրա ազդեցությամբ հայտնի կոշտությամբ զսպանակի երկարացումը:
3) հայտնի խտությամբ մարմնի ծավալը:
4) այն հավասարակշռող մեկ այլ ուժ:

220. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Մեկ նյուտոնն այն ուժն է, որը …

1) 1 կգ զանգվածով մարմնին հաղորդում է 9,8 մ/վ ^{2} արագացում:
2) 1 կգ զանգվածով մարմնին հաղորդում է 1 մ/վ ^{2} արագացում:

www.atc.am
LIVEWORKSHEETS